

ԱՐԵՎԱՆՈՅ ԱՐԱՐՏԵԱՆ

Հատը 3 Գեորգի Բաղրի Գե

ՎԵ ՀՐԵՏՐԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԶՈՐԵԹ ՕՐԵՐԸ

Դեղինը 4 Գեորգի Զատը

Յ. Գ. ՄԱՐԿՅԱՆ Համարատու — Տնօրէն	Տ Ա Ր Ե Գ Ի Ն Կ Ա Ն Ի Թ Ի Կ		Ծ Ա Ն Ո Ւ Ց Ա Գ Ի Ն		Չ. Բ. ՊԵՏՐՎԱՆՍԿԻ Հիմնադիր
	ԻԶՄԻՐ Օսմ. սոկի	1	5	գրուէ՝ տղը ՄԷԿ ԱՆԳՍՏ	
	ԴՈՒՐԱՐ Մէջիսկէ	6	2	գրուէ՝ ԵՐԿՈՒ ԱՆԳՍՏ	
	ՕՏԱՐ ԵՐԿՈՒ Ֆրանք	25	60	վարա ԵՐԿՈՒ ԱՆԳՍՏ	

Խ. ԴԵՐՅԱԿԵԱՆ, Կրտսերին՝ բաժանորդագրութեան եւ ժամուցման վերաբերեալ բոլոր գործերը: Բուլայիցէ-Պետիսիսի

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ՏՅՈՐԵՆՈՒԹԵԱՆ կը վերաբերի, անօրէն կը ղրկուի: Այլի խան Թի 17

ԻԶՄԻՐ, ԶԱՐԲԵՐ 22 ՓԵՏՐ. 5 ՄԱՐՏ

ԱԶԳԱՅԻՆ

Տեղեկագիր ազգային անդիցն Կոմիտէի եւ բողոք ուղղեալ առ Ամեն Արք. Պատրիարք

Խնայարկի Տէր,
Իօտեմիչի Հայ հասարակութիւնը տէր Արքայապետ քահանայի ինքնորոշ վերաբերութեամբ հանրագրութիւն մը ստորագրելու եւ բնագ հուշի Պօլիս առ Ամեն Ա. Պատրիարքն ուղղելու վրայ լինելով, մենք, յիշեալ քաղաքի Հայ հասարակութեան կողմէն իզմիր գտնուող պատուիրակներու, յանձնարարութիւն տանելով, յիշեալ հանրագրութեան օրինակն առ ձեզ յղելու եւ ինքնուրոյն կանխաձեռն պատ. լրագրոյ միջոցաւ հրատարակելու շնորհն ընէք ի գիտութիւն համայն Հայ հասարակութեան:

Պատ. Երկու Կոմիտէի Հայոց

ՊԱՏՃԻՆ ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹԵԱՆ

Առ Ամենապատու եւ Բարձրաձայն Տէր Ներսէս Արքայապետ Պատրիարք Հայոց եւ նախ ազատ ազգային կեդրոնական ժողովոյ ի Կ-Պօլիս:

Ամենապատու Ս. Հայր

Չորս տարի առաջ, մեր քաղաքին մէջ քահանայութեան պաշտօն վարող տէր Սիմոն քահանան ապօրինի պակ մը կատարած լինելով, Չիլիպիոյ դաւառին (որոյ թեմերէն մին է հարկեր պայտի հայ ընտանիք պարունակող Էօտեմիչ քաղաքը) Ս. Առաջնորդ տէր Միլիթիոսի կողմէն կարգէն լրացուող կը հուշակէ զտէր Սիմոն: Սակայն հակառակ ասոր, տեղւոյս Հայ հասարակութեան մի քանի անձինք, առաջապահ կանգնելով յիշեալ տէր Սիմոնի, վերստին քահանայութեան պաշտօն կատարել կուտան անոր չորունակ չորս տարի:

Մինչ ասիէ քանի մ'առան առաջ, ուրիշ պատի մը առթիւ արտօնութիւն կը խնդրուի Սքրբազան Առաջնորդէն, Ն. Գերապատութիւնը բացարձակապէս կը յայտարարէ թէ ինք չորս տարիէ ի վեր արդէն իր հովուութեան նշն զրկած ըլլալով Էօտեմիչի հանրութիւնը իր հօտը չձանձնար զմեզ: Առաջի մենք, ստորագրեալքս, վիշտ զգալով նորին Գե.

րապտուութեան հովուութեան զրկուած լինելու համար, վաւթացինք անմիջապէս ամեն միջոց ի դերով զնեզով բռնի հեռացուելու զտէր Սիմոն Էօտեմիչէն, եւ ինքնուր Ս. Առաջնորդէն որ կըրկին իր հոգեւոր հովուութեան ներքեւ բնդունի զմեզ: Խնդիրն պայտէս լրանալով, քանի մ'ամիս առաջ հրաւեր բրինք նորին Գերապատութեան, զալ պատուել Էօտեմիչի Հայ հասարակութիւնն իր ներկայութեամբ ազգային տարոյ գրուած քի եւ հաւաքման ատեն, եւ յորդորել զժողովուրդ առ այս գործ: Ս. Առաջնորդն համապատասխանայ այս հրաւերին եւ եկաւ Էօտեմիչ, սորա մտազանուող Պայքնաբ քաղաքէն իր հետ միտակց ընելով զտէր Արքայապետ քահանայ, այս վերջնայն խնդրանայ վրայ: Երբ նորին Արքայապետն հասաւ Էօտեմիչ, յայտարարեց մեզ թէ տեղւոյս այժմու քահանայ տէր Մանիկեանն անյարմար եւ անարժան լինելով քաղաք քահանայութեան պաշտօն վարելու, ի վերադարձին ի Չիլիպիոյ ուրիշ յարմար եւ արժան քահանայ մը պիտի զրկէ մեզ: Հասարակութեանն ոմանք առաջարկեցին նորին Գերապատութեան թէ, քանի որ այդպիսի զիտուարութիւն մ'ունի եւ քանի որ տէր Արքայապետ քահանայն եւս տեղս կը գտնուի արդէն, թողու զինքն իր քահանայ Էօտեմիչի հայոց Ս. Առաջնորդը հաւանութիւն կուտայ այս առաջարկութեան, եւ կըրկէ թէ կ'ընտրուի իրենց Ս. Արքայապետն ի թէ ժողովրդէն մեծամասնութեանն ուղէ, ուստի անմիջապէս հարկեր չափ ստորագրութիւն կը հաւաքուի այն քահանայն ուղղով, եւ կը ներկայացուի Արքայապետին: Ս. Ս. բացարձակ մեծամասնութիւնը տեսնելով, նորին Գերապատութիւնն իր շնորհալիցութեանն ու զոհութիւնը կը յայտնէ թէ Էօտեմիչի հասարակութեանն այսպիսի մի ձերուսի եւ իր նախկին քահանայն չէ ուղղած լընալ թողու, որով կը գովի ժողովրդէն այս կամքը:

Մինչ այս մինչ այն, երեք օր կ'անցնի եւ ազգային տարոյ գրուած քի համար Ս. Առաջնորդն Եկեղեցի կ'իջնայ, ուր մեք եւս բազմութեամբ կը լինենք եւ շրջապատեալ զանկով, Ն. Գերապատութիւնն տէր Արքայապետ քահանային թնամի երեք չորս անձերէ, միաձայն կը յայտարարենք իրեն, թէ ինչպէս գրով նոյնպէս բանիւ եւս կ'իմացանենք տէր

Արքայապետ իր մեր քահանան ճաննալ եւ զինքն ուղղինս: Ս. յայտարարութեան վրայ նորին Գերապատութեանն ստանալիցալ պատասխանը կ'ընդունինք թէ, այդ իր զիտուարութեանն եւ մենք բնաւ իրաւունք մը չունինք այս կամ այն քահանան պահանջելու: Ժողովուրդը կը լրատանայ այս անակընկալ պատասխանին վրայ եւ ցաւօք սրտի կը յայտնէ Ն. Գերապատութեան, որ նոյն քահանային յանդուրի ոխ եւ ատելութիւն յանող երեք չորս թնամեաց խօսքին համոզուելով, անանիս ընել կուղէ թէ ամբողջ ժողովրդէն կամքն եւ թէ ինք խոտուած:

Արքայապետ կը ղրկուի ի խնդիր կը մեկնի Եկեղեցիէն ձգելով ժողովուրդն յուզման մէջ: Հասարակութեանն ոմանք կը կրկնէ կը զիմեն իրեն եւ կը յայտնեն ցաւօք սրտի, թէ ժողովուրդն ինքզինքնը նախատեսած կը համարի նորին Գերապատութեան այս ընթացքէն, առ որ պատասխան կը ղրկուին թէ ինք անմիտ մարդոց հետ գործ չունի:

Իրաց այս վիճակին մէջ, կառաջարկուի նորին Գերապատութեան թէ, քանի որ տէր Արքայապետն Էօտեմիչի քահանայ չձանձնալու անկարողութեանն սրտմանը մէջ անգառնալի է, առեւտ ուրեմն զինքն եւ կրկին միտակց հեռացուէ Էօտեմիչէն, որպէսզի ժողովուրդը խողալի զանէ իր ներկայութեան չունենալով յիշեալ քահանան: Ս. յայտարարութեանն եւս ի պատասխանի՝ մեր կողմէ կարգուող պատուիրակները ցաւօք սրտի կըրկեն Ն. Գերապատութեանն թէ, «ես ինձի հետ ալ չեմ տանիր, Էօտեմիչ չիլք եթէ կուզին թող մուսուսնն այդ քահանան, բնաւ չեմ խառնուիր:»

Մեր պատասխաններն այս անյուշալի պատասխաններուն վրայ չուարած, զի ինչպէս կ'ընթան եւ տէր Արքայապետը կը ղրկեն առ Ն. Գերապատութեանն որպէս զի երկուս ազգայնու որ զինքը միտակց հեռացուէ Էօտեմիչէն: Գահանայն կ'ընթայ եւ արտասուք յայս կըրկուի որ ասան զինքը միտակց: Սակայն ցաւ է ըսել որ զանի եւս կը վառնէ իր ներկայութեանն:

Արդ, տեսնելով այս ցաւալի իրողութիւնները, կը ստիպուինք տէր Արքայապետին Էօտեմիչ մնալը տեսնելու, թէ եւ չենք թողուր որ քահանայական պաշտօն վարէ,

քանի որ Արքայապետ Առաջնորդն մեր կամքն անտես առնելով՝ արտօնութիւն չըտուած:

Օր մը յետոյ Ն. Արքայապետ թիւնը կը մեկնի ի Չիլիպիոյ, ձգելով ինքնին այս կնճառ եւ ժողովուրդն ալ վշտահար վիճակի մը մէջ:

Մինչ իրաց այս վիճակը կը շարունակէր եւ յուզումն ալ որ ըստ օրէ անհետեւ յայտնէր կարեւոր եւ ահա երեք քաղաք տես տէր Մանիկեան քահանայ, որոշ չեզոքուիլը ուստից գրգռելով կառաջարկէ տէր Արքայապետ քահանային որ պատարագ մատուցանէ Ս. Ս. առաջարկութիւնն իմանալով մենք, այսինքն Էօտեմիչի Հայ ժողովուրդքս, չենք կամիր որ տէր Արքայապետ պատարագէ, քանի որ Ս. Առաջնորդէն պաշտօնական արտօնութիւն մը չկայ, սակայն Մանիկեան քահանայ կը պնդէ եւ բարձր պատասխանատուութիւնն իր վրայ առնելով, կը համոզէ վերջապէս տէր Արքայապետն ու զմեզ, եւ այս վերջինը կը պատարագէ, թողով ամեն պատասխանատուութիւն տէր Մանիկեանի վրայ:

Սակայն, առաջ, որ յետոյ յայտնուեցաւ թէ տէր Արքայապետն Էօտեմիչի խողալուսէր ժողովուրդքս նեղութեան եւ դաւադրութեան մը զմեզ պայած էինք, տէր Մանիկեանի այս առաջարկութեան կատարմամբ:

Ս. յայտարարութեանն եւ տէր Արքայապետի մահապատ թնամի խնամութիւնն ունեցող երեք չորս խողալուսէր անձինք այս դաւք կը նիւթեն, եւ տէր Արքայապետ պատարագել տալով, անմիջապէս կը ղրկեն Չիլիպիոյ առ Ս. Առաջնորդ եւ առ կրօնական ժողով զաւառին, թէ տէր Արքայապետ ըմբոստացաւ եւ բռնի պատարագեց: Ամենքեւ է ուրեմն որ, այդ անձինք միշտ գտապարտուի եւ ազգակործան գարգալար մը մուսուսնն, միշտ խողալութիւն եւ ազգայնաբանութեան համար Էօտեմիչը մեզ:

Գաւառին կրօնական ժողովն ու իր սրբազան նախագահը կը գրեն Էօտեմիչ որ, տէր Արքայապետ առանց որ եւ է պատրուակ կամ պատճառ առաջադրելու անմիջապէս ձգէ Էօտեմիչ եւ իզմիր գայ: Տէր Արքայապետ կը պատարատուի երկուսու, մենք ժողովուրդքս, չենք ձգէր զինքը, եւ հարկուինք աւելի ստորագրութեան հանրագրութիւն մը կը նենք, թէ քանի որ գործն ալ այս աստիճանին հասաւ, պատարագ

րատու ենք մինչ իսկ արեւմտիս թափել քան թէ տէր Արքայապետ թողու, եւ կը ղրկենք առ Ս. Առաջնորդն ու առ կրօնական ժողով:

Գաւառին կրօնական ժողովը մեր հասարակութեան մէջէն անօրէն անձերէ բաղկացեալ (որոց մեծ մասը տէր Արքայապետի թնամիներէն) յանձնաժողով մը կը կազմէ, յանձնարարելով իրենն որ տէր Արքայապետ պաշտօնատես ծանուցանէ կարգալոյժ եղած ըլլալն եւ ազգայնաբար որ անմիջապէս իզմիր գայ:

Յանձնաժողովոյ նախագահը կը ղրկէ առ Ս. Առաջնորդ թէ, եթէ տէր Արքայապետ անմիջապէս Էօտեմիչ թողուլ ուղէ, ժողովուրդն անհրաժեշտ է որ զինքը ձգէ, այլ պիտի յուղի, գրգռուի եւ մինչեւ իսկ արեւմտահողութիւն պիտի պատահի, ուստի լուս է որ այդ քահանան քանի մը ամիս մնայ Էօտեմիչ, մինչեւ որ հասարակութիւնը խողալի: Յետ այս խողալման, կը յարէ յանձնաժողովոյ նախագահին նամակը, պատճառաւ մը կը լինի զի քահանայն յիզմիր եւ այսպէս գործին անպատեղ ելք մը կը արուի: Ս. յանձնակն անպատասխանի կը մնայ Ս. Առաջնորդին կողմէն: Սոյն այս միջոցներուն տէր Արքայապետ թնամիներէն մին զաղաքնի իզմիր կուղայ եւ ճիշ կը թափէ համարել Ս. Առաջնորդն որ բռնի բերելու տուր զՏ. Արքայապետին:

Արդ, Էօտեմիչի հասարակութեանն մէջ երկու օրինակ յայտարարու կը շարադրուի բազմաթիւ ստորագրութեամբ, որ կը յայտարարուի թէ ստորագրեալքս տէր Արքայապետ իրենց հոգեւոր հովուին ու խոտուան հայրը կը ներդնեն: Ս. յայտարարոց մին կը յանձնուի տէր Արքայապետ որպէսզի գիտնայ իր ծուխը, միւսը տէր Մանիկեանի, որպէսզի գիտնայ իրեն ծուխը չեղող ընտանեաց անունները:

Իրաց այս վիճակի մէջ ազգատուրքի գրուածքը շարունակելու համար թաղական խորհուրդը գումարել կուղուի: Տէր Արքայապետ թնամի մասէն զանուող թաղականք, չեն համապատասխանէր քանիցս կրկնուած այս հրաւերին, եւ կ'առարկեն թէ ցորչալի այս խնդիրն ու յուզումն մեզ, Ուստի մեր, այսինքն ժողովրդէն բացարձակ մեծամասնութեան համաձայն թաղականք մեր արտօնութեամբ ազգ. բողոք տուածք եւ արձագրութիւնք:

արկղի մը մէջ կնքելով կը պահեն յԱռաջնորդարան :

Այս եղելով թեման իրազէկ լինելով տեղւոյ ընդհանուր դատարանը, կը խնդրէ տեղական կառավարութեան, որ քննիչ մը զրկէ պաշտօնագէտ առաջադիւն վարչութիւն տեղւոյ, եղելով թիւնն ստուգելու և տեղեկագրելու համար : Ազգային վարչութիւնը կը յայտարարէ քննիչին թէ, այս երեցած յուզումը լոկ քահանայի մը խնդիր է, որոյ աստ ներկայութեան կը հակառակ կին քանի մը անձինք, և եթէ այդ քահանան մեկնի աստի, ճշմարիտ խռովութիւն մ'այն աստն պիտի ծագի :

Քննիչն այս եղանակաւ գործը կը տեղեկագրէ կառավարութեան : Սա ալ տեղեկագրութիւնը կը հաղորդէ առ դատարան կեդրոնական կառավարութիւնը քննիչին թէ, այս վերջինն ալ կը հաղորդէ Ձմիւռնիոյ ազգային վարչութեան :

Ազգային վարչութիւնն Ձմիւռնիոյ կը պատահանէ կեդր. կառավարութեան թէ այդ Տ. Աբրահամ քահանան կարգազուրկ եղած է կրօնական ժողովոյ կողմանէ, և հետեւաբար զանի իրբըր աշխարհական անհատ մը կը նկատէ և ոչ քահանայ :

Ըստ այս, կեդր. կառավարութիւնը կը հրամայէ տեղւոյ կառավարութեան որ (տէր) Աբրահամ իզմիր զրկէ : Տեղւոյ կառավարութիւնը սոյն հրամանն ի գործ կը դնէ, և տէր Աբրահամ իզմիր բերուելով գիշեր մը ոստիկանութեան բանտն անցուցէ : Եւ Տեղւոյ կեդր. կառավարութեան քննիչն առ Առաջնորդարանը քննիչին մը և միւսը քննիչին յազգային հիւանդանոց յիշեալ քաղաքին :

Ձմիւռնիոյ քահանայ մ'ալ որ դիտողութեան արժանի է :

Ասկէ զբեթէ երկու ամիսի չափ առաջ տէր Աբրահամ քահանան ուզող հարիւր քան եւրեք ստորագրութեամբ հանրա-

գրութիւն մը կ'ուղղուի 'ի քննիչին, երկու պատուիրակներու միջոցաւ : Ուստի այդ տեղի Առաջնորդարանը խառն ժողով գումարելով, պատասխան կը պարուի մեր պատուիրակներուն թէ, տէր Աբրահամ կարգազուրկ ըլլալով պէտք է որ իզմիր գայ, և զինքն ուղղի և չուղղի երկու կուսակցութեանց կողմանէ երկու փոխանորդ կարգուին և դատուին յատեն խառն ժողովոյ : Մեր պատուիրակները յանձնառու կըլան փոխանորդ կարգուելով : Առաջնորդարանը տէր Աբրահամն իզմիր բերելու : Համաձայնութիւն չը գոյանար, և մեր պատուիրակները մեկնելու աստն ցաւի սիրտ վերջին խօսք մ'ուղղելով կըսեն, որ եթէ տէր Աբրահամ ի խօսք միջին քահանայ չը մնայ, առանց որ և է յանցանք մ'ունենալու, ի խօսք միջին հայ հասարակութիւնը պիտի կորուսի :

Որքան մեծ կըլլայ մեր պատուիրակներու զարմանքն ու ցաւը, երբ ի պատասխանի այս խօսքին, ժողովոյ ատենագիր Պ. Ս. Պալապանեան յետ յայտարարելով իրենց թէ ինք Սրբազան Առաջնորդի կողմանէ ևս իր ներկայութիւնն ունի հոն, կըսէ մեր պատուիրակներուն թէ. « ինչ ըսել կուզէք ի խօսք միջին հայերը պիտի կորուսին ըսելով, կրօնափոխ պիտի ըլլան միթէ, նոքարդէն կրօնաւոր մարդեր չեն, ինչ կուզեն թող ըլլան մեր բնակչոց չէ » : Ահա առաջին արտայայտութիւն մը, որ դժբաղդար յայտնի քաջաբեր կը կարգայ մեզ այդ միջոցին դիմելու, և որ անյուսալի կը թուէր ժողովոյ ատենագիրին մը և միւսը քննիչին Ս. Առաջնորդը ներկայից պաշտօնական անձի մը կողմանէ :

Այդ էր ահա միջանկեալ պարագան :

Երբ քահանան, իզմիր կը բերուի, մեր կողմանէ տարբ պատուիրակ կը զրկենք իզմիր առ Ս. Առաջնորդ և առ Ազգային վարչութիւն տեղւոյն, որոյմէ ուրիշ

ոչինչ պատասխան կը տանան մեր պատուիրակներն եթէ ոչ սա թէ քահանան կարգէն լուծեալ է : Մեր պատուիրակները կը յայտարարեն թէ Առաջնորդը կամ վարչութիւնը կրնան տէր Աբրահամն ի խօսք միջին չը զրկել, բայց եթէ չեն ուղղի որ աղէտակ հետեանքներ ծագին զմեզ այսինքն ժողովուրդն հանդարտելու համար քննիչներ զրկեն մեզ : Եւ ինչ կը պատասխանուի մեր պատուիրակոց այս առաջարկութեան, ոչ այլ ինչ, եթէ ոչ սա թէ՛ կառավարութիւնը կարող է հանդարտել ժողովուրդը :

Ահա առաջին, Ամենագոտի Ս. Հայր, ժամանակէ մ'ի վեր ի խօսք միջին հայ ժողովուրդեան մէջ՝ տեղի ունեցած անցից համառօտ նկարագրութիւնը, զոր կը համարակինք մատուցանել առ Ձերդ բարձր Սրբազանութիւն, և բողոքելով Գաւառական վարչութեան մեզ դէմ բռնած այս ընթացքին համար, խոնարհաբար կը պաղտակենք Ձեր հայրախնամ և զթաւառ Բարձրութեան, որ ուղղութեան առնելով ի խօսք միջին հայ ժողովուրդեան այս ցաւալի կացութիւնը, շնորհ ընէ անպաղպ հրամայել առ որ անկէ, ի ձեռնհաս ատենն կոչել զտէր Աբրահամ քահանայ և դատել զինքն յանուն արդարութեան և անկողմնակալութեան :

Ի լրումն այդ դատաստանի, եթէ այսպէս տէր Աբրահամ քահանային իրեան համար կարգազուրկութիւն տրամադրող որեւէ յանցանք մ'ունենալն ապացուցուի կենդանի փաստերով, պատժուի ինք մեր թէլ զինքը : Ընդհակառակն եթէ յայտնուի նորա անմեղութիւն, կը համարձակինք յայտարարել Ձերդ բարձր Սրբազանութեան որ զինքը միշտ մեր քահանան և խոտոյնաւոր չայրը կը ճանչնանք մինչև ցմահ նորին և չենք ընդունիր մեզ համար ուրիշ որեւէ քահանայ : Այսու հանգերձ բոլորովն պատժուի ենք ժողովուրդեան մէջ զինքը չուղղուի մէկ քանի ըն-

տանեաց համար ուրիշ մի քահանայ, զով որ կամին, սնուցանել մեր անձնական ծախիւք :

Իսկ եթէ գործն այս կերպու չտեսնուի և մեր խնդիրն անլուծի մնայ, ցաւօք սրտի կը յայտարարենք որ պիտի ստիպուինք ուրիշ միջոցներու դիմել, և զբուրելու դատարան հոգեւոր հովուութեան և իշխանութեան :

Արդ, Սրբազան Հայր, մեծ յոյս տածելով, որ Ձեր Բարձր Սրբազանութիւն անտես չ'առնելով շնորհք կընէ ուղղութեան առնուել ի խօսք միջին հայոց այս խնդիր և կը հրամայէ առ որ անկէ նորին ընդհուպ և անպաղպ լուծմանը փութալ, մնամք Ձերդ Բարձր Սրբազանութեան ամենախոնարհ ծառայք :

Ի խօսք միջին, 16 Փետր. 1884

Ա. Պ. Ս. Մ. ՀԱՅԵԱՆ Ի ԱՐՇԱՆ

Մեծարյ Պարոն, — Առանց հարկ զգալու իմ անձին կամ անուան նրկատմանը Լոյսի մէջ ձեր գրածներուն պատասխանել, սա միայն հարկ կը զգամ և կը ստիպուիմ ըսել ձեզ թէ, դուք յանգէտ կամ յակամայ ստիպուած լինել և անպատահութիւն մը կը զգործէք, երբ մեր անօրինութեան ներքե կ'անուղ լրագրոյ մէջ « առ խմբագիր Լոյսի » վերնագրով և « Վ. Ստեփանեան » ստորագրութիւնը կրող նամակի մը պատասխանելու ուղիով՝ ուղղակի մեր անձին կամ անունին կ'ուղղէք ձեր խօսքերը :

Անուշտ տեսած էք Սրբազան Սրբազան լրագրոյ միայ, որ Յ. Կ. Աբրահամ անունը գտնուեալ « Գաւառական » ստորագրութեան տակ կը լինի ի խօսք միջին, որ մեզք ենք խմբագիր, ներքեք ըսել, որ դարձեալ երկու տեսակ անպատահութիւն կը զգործէք, նախ նամակագիրը թուելով խմբագիրն կ'ուղղէք ձեր խօսքերը, երկրորդ (եթէ նայիսկ խմբագիրն ուղղելու արտուէր ունէ նայր) կը լին անպատահութիւն մ'է անոր անունը տալով խօսք կամ անոր անունն ու անունը թշուառելով խօսքի : Կը չըլլէք անուշտ որ, « Վ. Ստեփանեան » ստորագրութեան նամակն այդ անպատահութիւններէն զերծ էք, և սխալագիր Լոյսի սկըզ-

մամբ անորոյ, այսինքն վերացական կամ, այսպէս լուրու համար, դատարան քահանան կ'ուղղուի իր խօսքը : Ասկէ զատ, ծիծաղելի չըլլա՞նք միթէ ձեզ, որ այսինքն գրածին պատասխանելու համար՝ այսինքն կուղղէք թշուառելու : Այլ է սակայն եթէ մասնաւոր յանձնարարութիւն կամ նպատակ մ'ունէք զմեզ թշուառելու համար, ըսելէք մը չունիմ առ այդ, ազատ էք ձեր ուզածը գրելու : Միմիայն, ներքեք ինձ ըսել թէ, խնդրոյն առարկայ եղող ձեր այդ գրութեամբ, դժբաղդար կ'ապագուցանէք միանգամ ընդ միշտ թէ, դուք, մեծարյ Պարոն, բողոքովն զուրկ կ'զտնուիք հասկըցողութեամբ՝ լրագրութեան պահանջած պոյսման ներքէն, իսկ լեզուով ու ոճով քաղաքավորութեան սահմանը պայտաներէն :

Յ. Կ. Ս. Մ. ՀԱՅԵԱՆ

ՆԵՐՔԻՆ

Սերատոյ կտաւարիչ Բիւֆաթ բայտ, Մէլիթէի Մութե սարքի Մուստաֆա բայտ, և Իսմայիլ Պէյ, Պալքէթէի կառավարիչ Բէշտա վաչա Կ. Պօրիս կանչուած են կառավարութեան կողմանէ :

Պօլսոյ ակմարոյ մէջ, կըսէ Եւթեմ, խիստ քիչ պատահած է, որ գաւառաց մէկ քանի բարձրագիր պոլսոնեայններ միանգամայն մայրաքաղաք կանչուին, ուստի բարձրագիր կարծիքներու մէջ կը ծփայ հասարակութիւնը թէ ինչ նշանակութիւն կրնայ ունենալ այս :

Հանրային շինութեան նախարարութեան նորոնութիւն մը խնդրուած է Տրապիզոնի և Կարսի մէջ երկաթուղի մը շինելու : Թուրք լրագրոց ըսածին համաձայն, կայսերական կառավարութիւնն որոշք է զինուորական ծառայութեան քանի մը ժամանակուան համար զերծ թողուլ Յունաստանի թողուած երկիրներ :

ԹԵՐԹՕՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ

ԵՐՈՒՅՆԻ ԵՒ ԱՄԵՒԻՍ

ԺԹ

Գեղանձն երիտասարդն իր բարձր հասակով, աննիւն կեցուածքով, վեճ բայց և այնպէս զթափուր նայուածքով միթէ արիւն հրեշտակի մը կերպարանն ունէր, թէ և կը զոտար բայց իր այլալուծութեան թաղուն պահելու կը ջանար :

Ամելիա չէր համարձակէր անոր նայելու, և արդէն իր ձեռքը կուրծքին վրայ դրած անոր ուժգին տրոփը կասեցնել կ'ուզէր : քանի մը վայրկեան լուծութիւն տրեց, ասոնց մէջ ոչ չէր կը համարձակէր խօսելու, այսպէս կ'ըլլայ, երբ իր տերը կը շարժին և հոգիները կը ճառեն լեզուները կը կարգեն : . . . այսպիսի պարագաներու մէջ լուծութիւն արցունքին առջև ստուար թուումը մ'է, երբ լեզուն խօսի աչքեր կը ցոլին :

Սակայն լուծութեան ալ իր նենդութիւններն ունի, եթէ սահմանեալ աստիճանն անցնի՝ լուրը կը մտնուի : Երուանդ սոյն հանդիսական ու վտանգաւոր լուծութեան վերջ տալու համար նախ զուրը գոցեց և յետոյ

դէպ Ամելիա երկու քայլ առնելով ըսաւ :

— Անուշտ կը զարմանաք այս ժամուս հոս տեսնելով զիս, բայց նուիրական պարտաւորութեան մը ստիպուած կուգամ, զոր կատարելու խօսք տուած եմ . . . :

Ամելիա կարծեց թէ երազ կը տեսնէ, երուանդին հասկնալ խօսքերն հարկ կը ցաւ ըսելու, և բողոքովն շփոթած անգամ մը հորեքորորդու լոյն նայեցաւ՝ որ խօսքը շարունակելու անկարող վիճակի ենթարկուած էր՝ մեղմ սրտառուէ ձայնով մը ըսաւ :

— Նստեցէք :

Երուանդ երկու քայլ ևս առաւ, և Ամելիայի մօտ, դէմ առ դէմ թիկնաթոփ վրայ բազմելով և իր սիրտը ու անհանդարտ դէմքին վրայ բնագործիկ ժպիտ մը շրջեցնելով խօսք տուաւ :

— Եւրոպայէն դառնալէս ի վեր՝ ծնողացս մահուանէն աւելի մեծ և տարօրինակ կեկիծ մը սիրտս կըմտաւ : Ձեր գոր չ'զիտեմ ինչ պատճառաւ, վճռած էք ուրիշներէ անձանթ պահել . . . այն օրէ ի վեր սոյն կեկիծի շարժառիթն անհետացնելու դիրքին և օրինաւոր միջոցներ կը փնտռէի իւրովի, և կը կարծէի թէ միմիայն էս եմ այս բանը մտածող . . . իսկ այսօր խիստ ուրախ և երջանիկ եմ

տեսնելով որ ինձմէ յառաջ ուրիշ մէկը, մեծ մարդ մը խորհչի և զըտեր է այն միակ միջոցն որ իմ առաջին մտածումն էր . . . Կետեալ բար փոխանակ Պ. Ռուբինեանի վրայ ցաւելու՝ անոր լծակցին ապագայ երջանկութիւնը շնորհաւորելու կը համարձակուի . . . :

— Ինչ կ'ըսէք, թո՞ւովեք Ամելիա հետազննէք հետաքրքրութիւնը շարժելով :

— Անոմ թէ ճակատագիրն այս օրուանէ կ'սխալ ձեռք փոխուի և վառաւոր ապագայ մը կը փոխանայ, և ես կը պարտաւոր զո՞չ լինի ու ինքզինքս կարի երջանիկ համարել ձեր բարորութիւնը տեսնելով . . . ըսաւ Երուանդ ձեռքը սրտին դնելով որու բախումն է թէ կրնայ ըսուի զերթէ ձայն կը հանգի :

— Ձեր խօսքերը զաղանկը մը կը պահեն, միմիջեք Ամելիա երիտասարդին այլալուծութեան զգածութիւնը՝ սակայն չ'եմ կարծեր որ իմ վրայ խնդալու չափ . . . :

— Ա՛յ, ո՛չ, ընդ միջեց անտիական երիտասարդն եւտանդեալ, — ինձ համար մարդկային բնութեան մէջ ամենէն աւելի եղող տարբերն են կեղծիքն ու ծաղրը, մանաւանդ այսպիսի պարագայի մէջ, այսպիսի սղակի որ մը ձեր վրայ զթափէ և ձեր վրեւերուն համակիր լինելէ զատ մեծ

պարտաւորութիւն մը չ'ընտր ըլլալ զորս անհետացած տեսնելով ձեզի հետ խնդակից լինել կը փախաբեմ . . .

— Իմ ճակատագրի անբայժ հարսուածներն ինչպէս և յանկարծ կրնան օրսերն սիր լծակցին . . . արդեօք Ռուբինեան ալ կ'իմանի մէջ է . . . : այսօր հիւանդատունէն պիտի վերադառնայ . . . ըսէք . . . այս է ձեր բերած լուրը :

— Ա՛յ, ա՛լ չ'պիտի դառնայ, ա՛լ յախտեան չ'պիտի տեսնէք զինքը . . . բարին Աստուած ձեր անմեղութիւնը և հրեշտակային համբերութիւնը այսօր կը վարձատրէ այն խելագարն ցկեանս ձեզմէ բաժնելով . . . :

— Ռուբին փոխանակ նոր դժբաղդութիւն մը գուժուել կ'ըսէք թէ բարորութիւն կ'աւետէք, յարեց Ամելիա խոր հուսաւոր մը :

— Նոր դժբաղդութիւնն այսպէս կըլուհանի ըսել, սկսեք էք զիտնալ սակայն որ եղարոյ մ'է ձեր շեռ խօսքը . . . Եղարոյ մը որ միայն իր մանկութեան օրերուն մէջ շատ քիչ անգամ տեսած է իր ծնողքը, և յետոյ ձեր ծնողաց չ'է թէ որդեկիր սյլ իրեն հարազատ զաւակ մը եւ զած է . . . Եղարոյ մը որ այս մեղաւից անտարին մէջ ձեզմէ զատ ըլլող անտեսով էակ մը ունեցած չ'է . . . ու երիտասարդին սչեքը լեցուեցան :

Շարն քնյ օտայ

բու մահամեծական ընտիրներն որք ճանկատան դաղձած են :

Անցագրոց վերաբերեալ նոր կանոնադրութիւն մը հրատարակուած է, կայսերական Իրատեով վաւերացեալ :

Վեհ. Սուլթանը՝ հեռագիր մը ուղղեց առ Ն. Վեհափ. Իտալիոյ թագաւորն, իւր գոհունակութիւնն յայտնող, իմանալով որ իտալական վեհապետին դէմ եղած ոճրագործութիւնը հետեւանք մը չէ ունեցած :

Ն. Վ. Հումպերթ թագաւորն՝ շնորհակալութիւն յայտնեց Վեհ. Սուլթանին իւր բարձր գոհունակութեան համար :

Ժէնեւայ Կորսոն՝ եգիպտական խորհրդարանի նախագահ Նուպար բաշայի տուած միաս բարեաւի այցելութեան միջոցին հետեւեալ խօսքերն արտասանեց. «Եգիպտոսի պատերազմը ազատեալ կերթամ» որուն Նուպար փայտ փութաց պատասխանելով. «Եգիպտոսի պատերազմը համար անհոգ եղիք, զորպէս, ամենէ յառաջ ազատեցէք խեղճ կիներն և աղայքն որոց գոյութիւնը փտանդի մէջ է :»

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 26 Փետր. — Սէն Ռէթերգոյրկէն Թոմսի վը հաղորդեւն :

Թագաւորական զինուորական զլխաւոր հրամանատար և ընդհանրապէս Չէրնայէֆ զորավարը յետս կոչուած է և նորա տեղ ի կաթիլիէֆ զորավարը կարգուած է :

Չէրնայէֆ զորավարը յետս կոչուեցաւ, վասնզի անգագար Հնդկաստանի վրայ յարձակման համար յատակագիծներ կառաջարկէր, հակառակ Չարին այդ մասին ունեցած հակակրօնութեան Պ. Բիլ Հատարակայ խորհրդարանին նախագահ անուանեցաւ հըրաժարեալ Սըր Պրանտի տեղ :

Ս. Ռէթերգոյրկէն 26 Փետր — Ժոն Բեյքընը Նոյն թուականաւ կիւմայէն թէ Պարսից Երզնէ Ռուսիոյ կայսեր հեռագիր մը ղրկէր է, շնորհաւորելով Նորին Վեհափառութիւնը Մէրփի առման մասին :

Ամեն պաշտօնատանց պատգամաւորներ բաղկացեալ յանձնաժողովը, հասարակաց վարչութեան ծախսոց զեղչումը կարգադրելու պաշտօնը կը շարունակէ :

Կը հաւատուի թէ, Կայսրը պիտի արտօնէ Վարչակազմի մէջ կարուածական վարկի զբաժանան մը հաստատութեան :

Պէտք եղած միջոցները ձեռք պիտի առնուին Թուրքիստանի մէջ աֆիսն ծախուին արգիւնու համար :

Լոնտոն 27 Փետր. — Հասարակաց խորհրդարանի համաձայնութեամբ, այսօր կառավարութեան ընտրելի Պ. Բիլ, խորհրդարանի նախագահ կարգեց, հրատարեալ Պ. Պրանտի տեղ, և ի վերջոյ այս ընտրութեան մասին Թագաւորին հաւանութիւնն արտասուել կը սպասուի :

— Սէն Ռէթերգոյրկէ 27 Փետր. Այսօրուան Սէն-Ռէթերգոյրկէ Ժոն Բեյքընը կը ղրկուի թէ, Հէրաթի նախկին գլխաւոր էյուպ Խան այժմ Մէշէտի մէջ բանարկեալ է և թէ բոլոր այն ասորաձայնութիւնք որոցմէ կը հասկըցուի թէ ինքը Ռուսիոյ կողմնէ պիտի յանձնարարուի Աֆգանիստանի մէջ խռովութեան ձեռնարկել, անհիմն են :

— Վիէննա 27 Փետր. — Դահաժառանգ իշխան արչիդուքս Թատոյֆի և արչիդուքուհի Սթեֆանիի ճամբորդութիւնը վերջնականապէս ապրիլ 18ին համար որոշուեցաւ : Իշխանն և իշխանուհին օր մը Պէրլատ պիտի մնան, անտի Կ. Պոլսի պիտի երթան և ութ օրուան ճանապարհորդութենէ մը վերջ Պուրթէշ և Վիէննա պիտի վերադառնան :

— Կորսոն զօրավարն հետեւեալը հեռագրած է Խորթմուէն Տեյն Թէլէր-Ֆրագրոյ :

Անվտանգ հասցի, Լաւ ընդունելութիւն գտայ այս դժբաղդ ժողովուրդէն : Կը յուսամ որ Ատուճոյ օգնութեամբ ամեն բան լաւ պիտի ընթանայ : Առ այժմ Մէշէտին յառաջ խաղարկ գիտաւորութիւն չըցուցնէր : Նախ կուղէ ամբողջ յարուսանել, բայց այդ շարժումը տեղի չպիտի ունենայ, եթէ արգարացի արտօնութիւններ շնորհուի ժողովուրդէն : Կը յաւիտ որ աւելի բան մը չեմ կրնար ըսել, բայց հաւեր կը կարգամ ձեր ընթերցողաց արգիւն Սուտանի ժողովուրդէն համար :

— Թոմսի Խարթումի թղթակցին ալ կըսէ նոյնպէս թէ զորպէս Կորսոն իրտ սիրով ընդունուեցաւ ժողովուրդէն կողմնէ, Կը վրովայն անոր շուրջն հաւաքուիլ ձեռքերն համբուրելու ղէին և «Սուտանի Սուլթան» կը կոչէին ղինքը :

Չորապէս հետեւեալ խօսքերն ուղղեց բազմութեան. կուգամ առանց զօրքի, բայց Ատուճոյ օգնութեամբ, Սուտանը տառապեցնող բոլոր աղէտից վերջ տաւու համար :

Պիտի մարտնչեմ ոչ թէ ղինուք, այլ ուղղութեան օգնով : Պաշտօնը չպիտի ըլլայ :

— Սուտարիւնէ կը ղրկեն Թոմսի թէ Գաալա պաշարուած է Օսման-Տիկնա :

Անգլիացի լրտեսք կ'իմացունեն թէ ապրտամբ Ելլիսերը Փետրվար 16ին Օսման-Տիկնայի բանակին մէջ ժողովուրդ են, Հին որդեցին թէ, Թոմարը պէտք էր առնուիլ Անգլիացոց հասնելն ստալ և ապա յարձակիլ Սուտարի վրայ :

— Պոմսի Էթէ-Էթէ եգիպտական լրագրին հետեւեալ կը ղրկէ :

«Կը հաւատան ղմեղ թէ Կորսոն փառա չորս օրէ ի վեր ղէնք, ուղղմամբ և ստակ լինողած է հեռագրու : Երէկ (Փետրվար 21) ուրիշ հեռագիր մը ևս Խարթումի եգիպտական զօրաց անգլիական ղրկուիլ կը ղրկէր Կորսոն փառա : Ահաւասիլ, կը յարէ յիշեալ թերթը, կատարեալ և ապահով կերպիւ Խարթումը պարպելու տարօրէն եղանակներ :

ԿՐՈՆԻԿՈՆ

Վաղը, հինգշաբթի, աղային գերեզմանատան մատրան հիմնարկութիւնը պիտի կատարուի :

Չէշմէի վերջին երկրաշարժէն ի վեր, տեղւոյն արկածեաց օրնութեան համար Վեհա. Կայսեր կողմնէ քաղաք գտնուող Իւրթիկնապահանքէն Սիւլթանի Պէյ երկուշաբթի օր քաղաքէս մեկնեցաւ ի Պոլս, լրացուցած ըլլալով իր յանձնարարութիւնը : Սիւլթանի Պէյ իր քաղաք և համարելի բնաւորութեամբ լաւ յիշատակներ կը թողու ի ղրկի Հոյ-Լոյսի մէջ :

Կիրակի գիշեր, Երեղէր Միլլըտի էֆէնտի հացկերոյթ մը աըւա ի պատիւ Ն. Վեհափիւն Սիւլթանի Պէյի և ներկայ էին նաև զօրպետ Սալիհ փառա, գաղղիական և իտալական հիւպատոսաց քարտուղարք, և բոլոր հասարակութեանց վերաբերող երևելի անձինք :

Ճաշին առեն բաժակ պարտուեցաւ և բարեմաղթութիւններ եղան Վեհա. Սիւլթանի Պէյի կենաց : Յետոյ փոխադարձաբար բաժակ առաջարկեց Սիւլթանի Պէյ Երեղէր ընտանաց բարօրութեանն ու յիշողութեան համար :

Ճաշին ետև պարն սկսաւ, և տեսեց շքեղ կերպով :

Վարչային կը ղրկեն մեզ Փետր. 20 թուականաւ, թէ անցեալ հինգշաբթիին ուրբաթ լուսնալու ղիշեր ժամը երեք և երեք քառորդ անցած՝ երկրաշարժի երկու սաստիկ և ութ թեթև ցնցումներ տեղի ունեցեր և տեղեր են երկուբուկէս ժամ :

Դարձեալ հետեւեալ ուրբաթ օր կէսօրէն ետև ժամը մէկուկէսին գիշերուանն աւելի սաստիկ ցնցում մը, իսկ ժամը երեքին տեղի սաստիկ երկուցնցումներ տեղի ունեցեր են :

Երկու կը յայտնուի թէ անցեալ երկրաշարժէն խախտուած հին պատերը, որք արդէն անձրևներէն թրջուած են, պիտի կործանին, հետաւար կառանվարութեան կողմնէ քաղղին ամեն թաղերը ղրկուիլ ղրկուեցան, որպէսզի եթէ կան փտանգաւոր պատեր ղրուչական միջոցներ ձեռք առնուին :

Ուրբաթ ցորեկուան առաջին ցնցումէն ուղտի ախտի մը շըրջապատեր վրէր և մէջը դըտնուող քանի մ'ուղտեր վրատաւ կայ տակ մնացեր, և սակայն անփնաս ազատուեր են :

Կիմացունեն թէ յիշեալ ցընցումներուն միշտ ահաւելի որտուներ կը հետեւէին, իսկ մերթմուտիսն որտուներ կը ղրուէին ամանց ցնցումի :

Տեղւոյ բնակիչք թէ և երկուղի մէջ են, սակայն եղանակին ցրտութեան պատճառաւ չեն համարձակիլ դաշտերն երթալ և վրաններու տակ բնակիլ :

Մինչև այս վայրկեան իսկ թէ սաստիկ և թէ թեթև ցընցումներ անպակաս են գիշեր և ցորեկ :

Կը հաւատուի թէ, կըսէ մեր թղթակցը, Արաշաթը ի մերձակայ բարձր լեռի մը ստորաք մխարվ՝ տար ջուր կը հանէ :

Կիրակի օր Օսման Իսկէլէսի մաս յոյն մը յանկարծամահ եղաւ :

Անցեալ ուրբաթ գիշեր Քէշէի ղիշ փողոցը ճանկ մը զարնուեցաւ, որիչ տաճիկէ մը :

Շարժմ գիշեր Հանի Իսթամ փողոցին մէջ հրդէս ծագելով մէկ երկու տուն պայթեցան :

Շարունակութիւն Հանգանակութեան Ազնուփայլ Տիկնայց և Օրիորդաց 'ի նպատ շինութեան Ս. Հսիսիսեան վարժարանի :

Table with 2 columns: Name, Amount. Includes items like Նախորդ դուարը 31 65, Տիկն Սօֆիա Թ. Սպարթալան 5, Տուտու Մ. Մարտուտ 2, Մարիամ Կ. Սպարթալ. 1, Հուրիսիմ Պ. Պարճեան 2 78, Վարդուհի Չիլիկիլեան 2, Գայիանէ Ս. Աղաճան. 2, Սրբուհի Յ. Սպարթալ. 10, Իսկուհի Է. Սպարթալ. 10, Նոյեմզար Ա. Սպարթ. 10, Տիրուհի Յ. Սրայտար. 2, Մարիամ Ս. Տէմբէրէճ. 1, Օրի. Մարիամ Գ. Պերկամալ. 2

81 41 (Շարունակել)

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Մարտ 1/13 հինգշաբթի օր կէսօրէն առաջ ժամը 10ին Պոսթօլի Ֆերիսանէին մէջ աճուրդով ծախու պիտի դրուին ոսկեղէն, անդամանդեղէն և գոհարեղէն զանազան նիւթեր, կանխիկ վճարելի, օսմանեան ոսկին 100 դրուչէն :

THE LONDON PHARMACY



Դ Ե Ղ Ա Ր Ա Ն Լ Օ Ն Տ Օ Ն

Մ. ՄՈՐԻՍ ԵՒ ԸՆԿ. ԱՆՎԻԼԱՍՆ ԵՒ ՕՏԱՐ ՔԻՄԻԱԳՈՐԹԸ Ի ԶՄԻՌՆԻԱ

MOORE'S.—Glycerine and Honey Jelly : Չեռները, երեսը և մանաւոր մորթը կակուղցնելու և տաքէն ու հոլէն առթուած ամեն կերպ արհեստաւորութիւնները անհետացնելու :

MOORE'S.—Effervescing Saline : Ախորժահամ և ստոյգարոյժ գեղընդէմ մաղձային ղգացմանց, անմարտողութեան, գլխացաւի և ստամբոթի ամեն անկարգութեանց :

MOORE'S.—Alcool d'Opheline Febrifuge Indien : Այս դեղը յանձնարարուած է մանաւորաբար այն երկիրներուն համար ուր ընդմիջական տեղեկեր կ'տրեւն (fevres intermittentes) :

MOORE'S.—American pick-me-up Bitters : Այս դեղը ուժաբեր ստամբային և ախորժակաբերէ : MOORE'S.—Guerison speciale (patent) : Գոտաուրթեան (gale) և ուրիշ հիւանդութեանց շանց ուժեղ համար :

MOORE'S.—Chlorodyne : Որովայնային ղիշ, քրտաբեր, մեղմիչ և աճիքիչ, ընդդէմ փորլուծութեան :

MOORE'S.—Callicura : Դիւրին և հաւաստի սպաքիտութիւն կոչուներու :

B. DIOGENIS & Co

Վ. ՏԻՕԵՆԻ ԵՒ ԸՆԿ.

ԸՆԴԱՐՁԱԿ ՎԱՃԱՍՏՈՒՐԻ ՏԻՕԵՆԻ ԵՒ ԸՆԿ.

ԸՆԴԱՆՈՒՐ ՎԱՃԱՍՏԱՆԻ ԸՆԴԱՆԻՍ ԶՄՐԱՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԿՈՐԱՅԻՆՈՒԹԵԱՆՅ

Խիտ շարժուող գիշերով ի վաճառ դրուած են սև և դուրանուր ամենազեղցիկ մետաքսեղէնք, Վրոնի ընտիր թաւիշներ, միահարթ և գծաւոր Սուրբիներ, սև և դուրանուր ամենէ նորաձև վեշիքներ :

Կանանց, փոքր աղջիկներու և տղայոց համար ամեն կերպ ՀԱՊՈՒՍՏԵՐԸ, զորօրինակ Մանիները, պատրաստ հանգերձները, Բոսթոնները, Փիլիսոնները, Մոնթիները, Մոսյի վերաբերեալ ամեն հանդերձեղէնները, ձերմակեղէնները, իւր ձիւնները, ասոնք ամենքն ալ ունին այն մասնաւոր վաճառքի ղիշերը որ միշտ նշանաւոր ըրած է մեր զործարաններու հաստատութիւնները :

Նշանաւոր են ղեղաներու համար նորանոր և այժմու նորաձևութեանց համապատասխանող նիւթերը, քիւմեղէնները (լինո), կտանները, և ամեն տեսակ բեհեղէններ որք մեր վաճառատունն ի հանդէս դրուած են :

Ունինք նոյնպէս հազարաւոր տեսակ հիւսիկներ աման ղիշերով, որոցմով կրնայ խիտ վայելուչ և ճաշակաւոր Թագաւորներ և Ռոպաներ շինուիլ :

ԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՍԱԿ

Տանիւններ, զարդեր, ասեղնագործութիւններ, ծալքեր, երկը և ծալակներ, լուսններ, ծաղիկներ, փետուրներ, փերլոյներ, քորտներ, վըղնոցներ, փողկապներ, շապիկներ, ֆանեալ շապիկներ, գուրլաներ երկաթ և կարճ, Թալիմաններ, կաշեղէն և մետաքսեղէն ձեռնոցներ, հովազարներ, անձրևանոց և հովանոցներ :

Բարիզի և Լոնտոնի ստալին կարգի վաճառատանց ամեն տեսակ անուշահոտութիւններ, արժամեղէն, սակեղն և նմանողական գոհարեղէններ, արժամեղէն և արժամագոծ նիւթեր, կաշեղէն իրաց վաճառքներ, մանկանց համար զանազան տեսակ խաղալիկներ, կառքեր : Մետաքսեղէն, բաւրա կեղէն և քիւմեղէն կարի դերձաններ : Անգլիագործելու և հիւսելու համար բուրդեր : Քանալեցայի, չուխայի և թաւիլի (գաւոթիկ) վրայ թէ սկսուած և թէ լրացած ասեղնագործութիւններ և այլն և այլն :

Բոլոր այս նիւթերն ու վաճառքներն արժանի են ուշադրութեան իրենց ղանազանութեամբը, ընտրութեամբն ու ամանութեամբը :

THE LIVERPOOL & LONDON & GLOBE

INSURANCE COMPANY
1, ԻՎՐԱՐՈՒՆ ԵՒ ԼՈՆԾՈՆ ԵՒ ԳԼՈԳ
ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Այս ընկերութիւնը կապահովէ հրդեհի դէմ թէ՛ Իւրիւրի և թէ՛ շրջակայից մէջ շէնքեր, կահարասիներ, անարժ գոյքեր, ապրանքներ, գործարաններ ևս: Անդրիական ասեղն մեծ ապահովական ընկերութեանց պայմաններուն համեմատ: Ընկերութիւնը կապահովէ նաև կեանք, աղջկանց օժիտ, զիւանս կեանքաւ, (rente viagere) ևս ևս: Ապահովելուց տրուած վերջին բաժնեկիցք (չահու բաժանուած միասեղ) 1 1/2% եղան, տարեկան ապահովեալ գումար վրայ: Գործադարձ ՏՈՆ Տ՝ ԱՆՏՐԱՍ Զրանկաց թաղ, Անթուան Երկրայի Գլխաւոր Վարչութիւնը կրնայ զիւրեւ նաև Եւր-Ամերիկայի Գլխաւոր Գործակալը Ս. Սպարթակեան եղբայր սեղանատուներ:

EUGENE DE FRANCONY A BORDEAUX

ԷՕԺԷ ՏՐ ՖՐԱՆՔՈՆԻ Ի ՊՕՐՏՈՅ

Ահաբան ընդէր Բժեհաբան
Այն փոճառատան բնակարաններն հանրաճանաչ են իրենց բնարութեամբն ու աղտութեամբն, որոնց չարաւորութեամբն ու անխաղտութեամբն: Իր զիւրի մէջ տոն փոճառատան նաև իւր ներկայացուցիչն ունի Յ. Գ. Վէլեան, Զրանկաց թաղ, Վ. Ի. Թէրի հար ֆերիանէն: Կրճատութիւն նաև Գորտայի Ե. մեծաքանակ տեսակ գինիներ, Քիւրտոս Մարտայ, Վերմուս, Շերի, տեսակ տեսակ Շամբան, ետեւոր անէնք խիտ չարաւոր գինիներով: Մերանիկի անեղաքիտի Նեւեթ գինի 1/4 մեծիտ օրտոն: Այս գինին մասնաւորապէս յանձնարարուած է բաղաբիտ նշանաւոր բժիշկներուն կողմանէ, իւր խիտ անեղաքոր և ուժաւոր: Գնել ուզողը կրնայ զիւրեւ նաև առ Կ. Մարթեան, Ռուպլե Գլխաւոր:

LONDON & LANCASHIRE

ԴՐԱՄԱԴԻՒՆԻ ԴՐԱՄԱԴ. ՊԱՀԵՍԻ
ԱՆԳՂԻԱԿԱՆ ՈՍԿԻ ԱՆԳՂ. ՈՍԿԻ
1,832,000 232,948



Այն ընկերութիւնը որ հաստատուած է 1862 թն կազմ հովե միմիայն հրդեհի փանդներու դէմ: Հասարակաց շէնքերու համար 0/0 20 դեղը կը լայ: Ընդհանուր գործակալը և փոխանորդը Զմիւռնիոյ և Վիլլիքիմի միւս քաղաքաց համար: ՖՐԱՆՔՈՆ ԵՒ ԶԱՄԱԿՈՓՈՒՆՈՒՐ ՖՐԱՆԿԻԱ ԵՒ ԶԱՄԱԿՈՓՈՒՆՈՒՐ Գրանիակեան Եւրոպայի Եւրոպայի 3 Այլ-Եւրոպայի մաս: Ապահովելու ուզողը կրնայ զիւրեւ նաև Բուպլե Գլխաւոր: Բէն Յ. Դերձակեան եղբայր գրանիակալ:

գործակալութիւնը

ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

QUEEN

Սպանիայի Բարոնի Ապահովական ընկերութիւնը կապահովէ հրդեհի, զիւանս հասարակ (rente viagere) և աղջկանց օժիտներ մասնաւոր և օդատար պայմաններով: Կապահովէ նա հրդեհի դէմ շէնքեր, կահարասիներ, անարժ գոյքեր, ապրանքներ և շէնքեր: Թէ՛ Զմիւռնիոյ և թէ՛ շրջակայ գիւղերուն մէջ առաւելագոյն օդատար պայմաններով նշանակուած փոքր Ասիոյ, Սուրիոյ, Գորտանիոյ Եւրոպայի, Բուսանիոյ և Բուսանիոյ գլխաւոր քաղաքաց, Միլիթրական, Յոնիական, Սրբիպոլիսի կողմաց մէջ, թէ՛ ուղղակի կերպիւ և թէ՛ իւր ֆոն Գործակալաց միջոցաւ, որք Զմիւռնիոյ Ընդհանուր Գործակալութեան կախումն ունին:



RELIANCE

Վստահութիւն ընկերութիւնը կապահովէ շէնքերու, զիւանս հասարակ (rente viagere) և աղջկանց օժիտներ մասնաւոր և օդատար պայմաններով: Կապահովէ նա հրդեհի դէմ շէնքեր, կահարասիներ, անարժ գոյքեր, ապրանքներ և շէնքեր: Թէ՛ Զմիւռնիոյ և թէ՛ շրջակայ գիւղերուն մէջ առաւելագոյն օդատար պայմաններով նշանակուած փոքր Ասիոյ, Սուրիոյ, Գորտանիոյ Եւրոպայի, Բուսանիոյ և Բուսանիոյ գլխաւոր քաղաքաց, Միլիթրական, Յոնիական, Սրբիպոլիսի կողմաց մէջ, թէ՛ ուղղակի կերպիւ և թէ՛ իւր ֆոն Գործակալաց միջոցաւ, որք Զմիւռնիոյ Ընդհանուր Գործակալութեան կախումն ունին:

ԲԱՍԵՆՍԱՆ Զրանկաց թաղ Գորտանիոյ Գլխաւոր Վարչութիւնը Թիւ 2 և 3 ձեռնարկ Բէլառիմալը պայլի Սեֆերեան խանի վերի յարկը թիւ 3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԾԱԿԱՆ

Ապահովել ուզողները կրնան նաև զԻՎԷՆ Սեֆերեան խանին քով նստիաններու մտադրանք ուր կը գտնուի ֆոն ԳՐԾԱԿԱՆ Բ. Կ. Հիւսեան

Մանրամասն տեղեկութեանց համար պէտք է զիւ մէկ վերալիցեալ խանին վերի յարկը թիւ 3 մասնաճիւղին ՏՆՕՐԷՆ Բիւրի Ռ. Կուրի

QUEEN Ընկերութիւնը իւր 2,000,000 Անգլիական սոկայ գրամով իրեն հետ միասեղ ունի նաև բաժնետէտաց ԱՆՍԱՀՄԱՆ Երաշխաւորութիւնը, որով կատարեալ վստահութեան արժանի է: Ընդ. Գործակալը ՏՆՕՐ Ա. Ա. ԿՈՒ լիազոր արձանութիւն ունի ընկերութեանց դէմ եղած որ և է գանգատանաց և խնդրանաց պատասխանել և եղած կորուսաները ԱՆՍՐԱՊԱՊԱՎ լծարի:

Table with 4 columns listing names and titles of directors and staff for Queen and Reliance insurance companies. Includes names like Ա. Արտուրյան, Ս. Սպարթակեան, Բ. Կ. Հիւսեան, etc.